

Ստեփանյան Ստեփան Սմբատի

Կենսագրական համառոտ տվյալներ



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, Տեղեկատվության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանը ծնվել է 1927թ. նոյեմբերի 20-ին Արթիկ քաղաքում:

Ոսկե մեդալով ավարտել է Արթիկի միջնակարգ դպրոցը: Ուսանել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, որն ավարտելուց հետո ավելի քան քառորդ դար աշխատել է ՀԿԿ Կենտկոմում, սկզբում որպես դասախոս և այնուհետև դասախոսական խմբի ղեկավար:

Մոսկվայում 1965 թ. ավարտելով ասպիրանտուրան՝ պաշտպանում է թեկնածուական թեզ, որը նվիրված էր ազգամիջյան հարաբերությունների գիտական վերլուծությանը:

1965-1973թթ. աշխատելու գերմանական արխիվներում ու գրադարաններում, որոնցում հայտնաբերած փաստաթղթերի ու նյութերի հիման վրա գրել ու հրատարակել է մի շարք աշխատություններ: Հայտնի պատմաբան թուրքագետ Ռուբեն Սահակյանի բնութագրմամբ, երկրորդ աշխարհամարտից հետո “Սո. Ստեփանյանը Հայաստանի պատմաբաններից առաջինն է, որ օգտվել է գերմանական համապատասխան արխիվային ֆոնդերից ու գրադարաններից և հաջողությամբ վեր է հանել անհրաժեշտ փաստաթղթեր, որոնց հիման վրա իր աշխատություններում աշխարհին է ներկայացրել Հայոց ցեղասպանության հսկայանարդկային էությունը”:

1975թ. Մոսկվայում, Սո. Ստեփանյանը պաշտպանել է դոկտորական թեզ, “Հայաստանը Գերմանիայի քաղաքականության մեջ 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին”, 1980 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Նա հեղինակ է 22 գրքի և ավելի քան 500 գիտական ու հրատարակախոսական հոդվածների, որոնք հրատարակվել են տարբեր լեզուներով:

Հայերի ցեղասպանության ճանաչման գործում Սո. Ստեփանյանի կարևոր ներդրումներից մեկն այն է, որ նա Ռուսաստանի Պետական Դոմայի համար պատրաստել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի ամբողջ փաթեթը, որի հիման վրա Պետական դուման 1995թ. ապրիլի 14-ին ընդունել է “Հայտարարություն 1915-1922թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին”:

Նրա կատարած այդ աշխատանքի մասին պաշտոնական հաղորդումներ են հրատարակվել “Ուրարտու” (ռուսերեն) 1995թ. մայիսի 17-ի և “Մեր խոսքը” (հայերեն) թերթերի 1995թ. հունիսի 30-ի համարներում:

Սո. Ստեփանյանը երկար տարիներ աշխատել է քաղաքագիտության ամբիոնի վարիչ Երևանի պոլիտեխնիկական և գյուղատնտեսական ինստիտուտներում: 1994թ. օգոստոսի 1-ից նա աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, սկզբում առաջատար գիտական աշխատող, այնուհետև Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ: Աշխատում է նաև Երևանի “Հրաչյա Աճառյան” համալսարանի միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության ամբիոնի վարիչ:

Ստեղծած գիտական աշխատությունների և մասնավորապես Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու հայերի արդարացի պահանջատիրության հիմնավորման, դրանցում ներդրած ծանրակշիռ ավանդի, ինչպես նաև այդ առարկեզում ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության համար Սո. Ստեփանյանը արժանացել է “Պատվո նշան” երկու շքանշանի(1967թ. և 1986թ.), Ս. Ի. Վալիլովի անվան մեդալի (1987թ.), Գերմանական Դեմոկրատական Հանրապետության Իսաղաղության Իտրիորդի մեդալի (1985թ.), Տեղեկատվության միջազգային ակադեմիայի ակադեմիկոսի կոչման (1998թ.):

Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցին “Ի գնահատումն ցեղասպանության հարցերին նվիրված միջազգային գիտաժողովին մասնակցության և ցեղասպանության ճանաչման ու կանխարգելման բնագավառում ունեցած ներդրման” Սո. Ստեփանյանը արժանանում է ՀՀ առաջին նախագահի պատվոգրին:

Արժանվույն գնահատելով սո. Ստեփանյանի աշխատանքները “Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և սփյուռքահայության պատմության ուսումնասիրման

բնագավառում գիտական հետազոտությունների համար, որոնք կարևոր ներդրում են հայ պատմագիտության մեջ”, ՀՀ ԳԱԱ նախագահը նրան պարգևատրում է պատվոգրով:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի 2005թ. ապրիլի 23-ի որոշմամբ սո. Ստեփանյանը պարգևատրվում է “ցեղասպանագիտության մեջ ձեռք բերած վաստակի համար” մեդալով:

Սո. Ստեփանյանը մասնակցել և զեկուցումներ է կարդացել Հայոց ցեղասպանությանը նվիրված բոլոր միջազգային գիտաժողովներին (1995-ից մինչև օրս): Նա Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ Հայկական հեռուստատեսությամբ և ռադիոյով բազմաթիվ ելույթներ է ունեցել ու շարունակում է իր ակտիվ գիտական և հասարակական գործունեությունը այդ սապարեզում:

Ստեփան Ստեփանյանի հրատարակված
աշխատանքների ցանկ

Ստեփան Ստեփանյանը գրել ու հրատարակել է 20-ից ավելի մենագրություններ, գրքեր և շուրջ 500 գիտական ու հրատարակախոսական հոդվածներ, սակայն հրատարակված սույն աշխատանքների ցանկում ներկայացվում են միայն Հայկական հարցի, հայերի ցեղասպանության վերաբերյալ գրքերի ու գիտական հոդվածների մի մասը:

Գրքեր

1. “Հայաստանը ինպերիալիստական Գերմանիայի քաղաքականության մեջ (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ)” Երևան, “Հայաստան”, 1975թ. 13 մամուլ, ռուսերեն: Գերմանական արխիվային փաստաթղթերի հիման վրա հաստատվում է 19-րդ դարի 90-ական թվականների հայերի ցեղասպանությունը և ողբերգության շարունակությունը հանդիսացող Հայոց Մեծ Եղեռնը առաջին աշխարհամարտի ժամանակ և դրանից հետո: Գրքի առաջաբանի հեղինակ ակադեմիկոս Ի. Մինցը նշում է, որ “Սո. Ստեփանյանի աշխատությունը նոր ներդրում է պատմագիտության մեջ”:

2. “Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին”: Երևան, “Հայաստան”, 1991թ., հատոր առաջին, 25 մամուլ, ռուսերեն: Այս աշխատության մեջ

տեղադրված են Ստեփան Ստեփանյանի կողմից գերմանական արխիվների, մասնավորապես Պոտոդամի, Դրեզդենի պետական արխիվների, Բեռլինի միսիոներական և այլ արխիվների փաստաթղթեր, հայերի ցեղասպանության Գերմանացի ականատեսների, գիտնականների, հրապարակախոսների, լրագրողների վկայություններ: Գրքի մի շարք գրախոսներ այդ աշխատությունը նշանակալի ավանդ են համարում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործում:

3. “Թալեաթ փաշայի դատավարությունը”, Մոսկվա, “Ֆենիքս”, 1992թ., 15 մամուլ, ռուսերեն: Գրքում տեղադրված են գերմաներենից առաջին անգամ ռուսերեն թարգմանված դատավարության սղագրությունը, հայերի ցեղասպանության գերմանացի ականատեսների վկայությունները, Արմին Վեգների, Թեսսա Հոֆմանի, Ստեփան Ստեփանյանի առաջաբանները:

Այս գրքի ռուսերեն հրատարակությունը նույնպես կարևոր ավանդ է հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործում:

4. “Հայոց ցեղասպանությունը” , համահեղինակ ՀՀ ԳԱԹ թղթակից անդամ Ազատ Համբարյանի հետ: Երևան, “Գիտություն”, 1995թ., 4.5 մամուլ:

5. “Արմին Վեգները և Էրնստ Վերները Հայոց ցեղասպանության մասին”: Երևան, Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման կենտրոն, 1996թ., 3 մամուլ:

6. “Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը”: Երևան, 1998թ., 3.5 մամուլ:

7. “20-րդ դարի առաջին ցեղասպանությունը. միջազգային ճանաչման, հայերի ցեղասպանության հետևանքների վերացման, արդարացի պահանջատիրության հիմնահարցերը և պատմական դասերը”, Սանկտ-Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, Էկոնոմիկայի և իրավունքի ինստիտուտի Երևանի մասնաճյուղի հրատարակչություն, Երևան, 2005թ., ռուսերեն, 3.25 մամուլ:

8. Թալեաթ փաշայի դատավարությունը, Երևան, 2007թ. ռուսերեն, 18 մամուլ, Ստ. Ստեփանյանի առաջաբանով, ծանոթագրություններով և խմբագրությամբ:

Գիտական հոդվածներ

1. “Կայզերական Գերմանիայի ինպերիալիստական ձգտումները Արևմտյան Հայաստանի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին”, “Լրաբեր հասարակական գիտությունների”, N 7, Երևան, 1972թ., ռուսերեն, էջ 48-57:
2. “Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում և Կայզերական Գերմանիայի հանցավոր մեղսակցությունը”, “Բանբեր Հայաստանի արխիվների”, N 1, Երևան, 1973թ., ռուսերեն, էջ 197-208:
3. “Գերմանիայի դիրքորոշումը Արևմտյան Հայաստանի ռեֆորմների հարցում”, “Լրաբեր հասարակական գիտությունների”, N 7, Երևան, 1973թ., ռուսերեն:
4. “Էրնատ Վերների նոր աշխատությունը 1915-1916 թվականների հայկական սարսափների մասին”, “Բանբեր Հայաստանի արխիվների”, N 1, Երևան, 1974թ., ռուսերեն, էջ 43-54:
5. “Կայզերական Գերմանիայի ինպերիալիստական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ”, “Պոզրում”, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն, 1979, գերմաներեն, էջ 22-28:
6. “Բաց նամակ ԽՍՀՄ պրեզիդենտ Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովին” (հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին), “Խորհրդային Հայաստան”, 21 մարտի 1990թ.:
7. “Բաց նամակ ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Քարտերին” (հայերի ցեղասպանության ճանաչման և հայոց արդարացի պահանջատիրության մասին), 9 նոյեմբերի 1977թ., “Հնչակ Հայաստանի”, 29 դեկտեմբերի 1991թ.:
8. “20-րդ դարի առաջին ցեղասպանությունը”, “Հրաչյա Աճառյան” համալսարանի գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 1994թ., էջ 27-35:
9. “Գիրք, որը պատմական դաս է համայն մարդկության համար” (“Թալեաթ փաշայի դատավարության” ռուսերեն հրատարակության առթիվ): “Արարատ”, բացառիկ (տարեգիրք), Բեյրութ, 1994թ., էջ 22-27:
10. “Հայերի ցեղասպանությունը և Կայզերական Գերմանիայի մեղսակցությունը”, “1915թ. Հայոց ցեղասպանությունը. պատմագրության հարցեր”, Երևան, 1995թ., էջ 49-60:

11. “Հայոց ցեղասպանությունը և Բեռլինյան դատավարությունը”, “Լրաբեր հասարակական գիտությունների”, N 1, 1995թ., Երևան, էջ 57-69:
12. “Արմին Վեգները հայերի ցեղասպանության մասին”, “Պատմա-բանասիրական հանդես”, N 2, Երևան, 1995թ., էջ 33-40:
13. “Գերմանական պաշտոնական փաստաթղթերը հայերի ցեղասպանության մասին”, “Բնօրրան”, N 1, Երևան, 1995թ., էջ 21-24:
14. “Ինչպես ծնվեց Ռուսաստանի պետական Դումայի հայտարարությունը հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին”, “Նայիրի”, բացառիկ (տարեգիրք), Բեյրութ, 1996թ., էջ 12-14:
15. “Ուրֆայի հերոսական պայքարը (նոր փաստաթղթեր գերմանական արխիվներից)”, “Բնօրրան”, N 1-2, Երևան, 1996թ., էջ 13-14:
16. “ Հայերի ցեղասպանությունը և Հայոց արդարացի պահանջատիրությունը”, “Ցեղասպանության պրոբլեմները” (1995թ. ապրիլի 21-23-ը Երևանում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսի զեկուցումների ու ելույթների ժողովածու), Տորոնտո, 1997թ., էջ 25-29:
17. “Անտոնի Կրաֆտ-Բոնարը Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության մասին”, “Բնօրրան”, N 2, Երևան, 1997թ., էջ 8-17:
18. “Թալեսթ փաշան որպես հայերի տեղահանության ու ցեղասպանության կազմակերպիչ”, “Երիտասարդ Հայաստան”, N 1,2,3,4, Նյու Ջերսի, 1997թ.:
19. “Հայ ժողովրդի մեծ բարեկամը” (Յո. Լեվիսիուսի ծննդյան 140-ամյակին նվիրված ժողովածու), Երևան, 1998թ., էջ 31-38:
20. “ Յո. Լեվիսիուսի հայանպաստ գործունեությունը Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում”, “Էջմիածին”, ապրիլ, 1999թ., էջ 21-39:
21. “Հայկական Հարցը և Գերմանիան (1890-ական թվականներ)”, Երևանի Էկոլոգիայի և իրավունքի համալսարանի գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2000թ., էջ 55-63:
22. “Հայկական Հարցը ինչպես որ կա”, “Նայիրի”, բացառիկ (տարեգիրք), Բեյրութ, 2001թ., էջ 24-27:

23. “Հայկական Հարցի և հայերի ցեղասպանության լուսաբանումը Մ. Գ. Ներսիսյանի աշխատություններում”, “Լրաբեր հասարակական գիտությունների”, N 1, 2001թ., էջ 43-56:
24. “20-րդ դարի առաջին ցեղասպանությունը և պատմության դասերը”, “Նայիրի”, բացառիկ (տարեգիրք), Բեյրութ, 2002թ., էջ 26-29:
25. “Յո. Լեվսիուսի “Գերմանիան և Հայաստանը” աշխատաստությունը”, “Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր”, N 5, Երևան, 2002թ., ռուսերեն, էջ 57-70:
26. “Թալեաթ փաշայի հրամանագրերը հայերի տեղահանության և ցեղասպանության մասին”, “Ազդակ”, տարեգիրք, Բեյրութ, 2003թ., էջ 13-16:
27. “Թուրք պատմաբան Թաներ Սքչանը Հայկական Հարցի և հայերի ցեղասպանության մասին”, “Մխիթար Գոշ” գիտամեթոդական հանդես, N 2, 2003թ., էջ 25-37:
28. “Հայերի ցեղասպանությունը. պատճառները, հետևանքները և դասերը”, “Օրենք և իրականություն”, միջազգային իրավաբանական գիտական հանդես, N 7-8, Երևան, 2004թ., էջ 19-24:
29. “Հայոց ցեղասպանությունը Արմին Վեզների վկայություններում”, Երևանի պետական համալսարանի “Հայոց Մեծ Եղեռն -90” Գիտական հոդվածների ժողովածու, 2005թ., Երևան, էջ 215-229:
30. “Հայոց Մեծ Եղեռնը և Յոհաննես Լեվսիուսը”, “Ալիք”, Թեհրան, 2005թ.:
31. “Արմին Վեզների բաց նամակը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին անապատ տեղահանելու մասին”, “Մաշտոց”, հասարակական, կրթամշակութային, գիտական, բնապահպանական հանդես, “Է” համար, Երևան, 2005 թ., էջ 14-23:
32. “Հայոց ցեղասպանությունը և Բեռլինյան դատավարությունը”, “Օրենք և իրականություն”, միջազգային իրավաբանական գիտական հանդես, N 4, Երևան, 2005թ., էջ 19-26:
33. “Հայոց ցեղասպանությունը քաղաքակրթության ամոթն է. ի՞նչ են վկայում նորահայտ փաստաթղթերը”, “Օրենք և իրականություն”, միջազգային իրավաբանական գիտական հանդես, N 4, Երևան, 2006թ., էջ 30-32:

34. “Հայերի ցեղասպանությունը որպես հանցագործություն մարդկության հանդեպ”, “ԻՏՈՎՈՒ ըսՈՉՎՐԱՌԻԿ”, ՋԵՂՎՈՍ, ԸՈՌԴԱԿՍԿՈՒ, ԼԻՏՈՎՈՒՄ, ՌՈՍԵՐԵՆ, ԽՈԿՏԵՄԲԵՐ 2007թ., էջ 10-11:
35. “Արման Կիրակոսյանի գրքերը. “Այնպիսիներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման”, “Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը”: “Լրաբեր հասարակական գիտությունների”, 2007, N 1, էջ 259-263:
36. “Հայոց ցեղասպանություն-92. դատապարտող վկայություններ”, “Օրենք և իրականություն”, միջազգային իրավաբանական գիտական հանդես, N 4, Երևան, 2007թ., էջ 27-31:
37. “Հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման խնդիրները անցյալում և ներկայում”, “Գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում”, գիտական զեկուցումների ժողովածու Երևանի “Հրաչյա Աճառյան” համալսարանի, 2007թ., էջ 145-154:
38. “Ցեղասպանության ժամանակահատվածում տեղահանված ու նահատակված հայերի, նրանց նյութական ու հոգևոր կորուստների տվյալները”, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հրատարակչություն, 2007թ., էջ 204-210:

2008 թվական

1. Հայոց ցեղասպանությունը և մեր ժամանակը, <Դրոշակ>, No.7, 2008, էջ 18-22:
2. Բախտորոշ պայմանագրի 180-ամյակը, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 180 տարին, <Փակագիծ>, 27 փետրվարի, 2008:
3. Հայերի ցեղասպանության նորահայտ փաստաթղթերը, <Ուղտ Արարատի>, 2008, No.2 (16), Երևան, էջ 24-25:
4. Պոլսահայ գաղթօջախի կայացման երկու դարը (գրախոսություն Ա.Խառատյանի մենագրության վերաբերյալ), <Դրոշակ> ամսագիր, 2008, ապրիլ, էջ 60-68:
5. Սոգությունի (Սառնաղբյուր) 1918 թ. Ճակատամարտի 90-ամյակին նվիրված <Այունք> գրքի առաջաբանը, Երևան, 2008, էջ 8-11:
6. Ն.Սարուխանյանի <Ալեքսեյ Զիվլեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը> գրքի խմբագիր:

2009 թվական

1. Հայական Հարցի միջազգայնացման 130-ամյա դասերը, <Գիտաժողովի զեկուցումների ժողովածու>, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2009, էջ 7-21:
2. Հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումը և հետևանքների վերացումը համամարդկային խնդիր է, <Գիտություն>, մարտ, No.3, 2009 թ., էջ 4-5:
3. Հայության ապագան վերադառնալու է սոցալիզմին, <Հանուն Հայրենիք>, ազգային գաղափարախոսական ամսաթերթ, No.1, 2009թ.:
4. Սոցիալիզմը մարդկության երազանքն ու նպատակն է, <Իրավունքը de facto>, No. 16, Երևան, 2009 թ.:
5. Կարսի պայմանագիրը ինչպես որ կա, <Հայաստանի զրուցակից>, Համազգային թերթ, 15 մայիս 2009 թ.: Հողվածը հրատարակվել է նույն համարում հայերեն և ռուսերեն:
6. Ալեքսեյ Ջիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը (Ն.Սարուխանյանի համանուն գրքի մասին գրախոսական), Պատմաբանասիրական հանդես, 2009, N 1, էջ 235-238:
7. Ստեփան Սմբատի Ստեփանյանի կենսամատենագիտությունը, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատարակչություն, 2009 թ., 48 էջ:
8. Հայկական հարցը ինչպես որ կա, <Հայաստանի զրուցակից>, համազգային թերթ, 12 հունիսի 2009 թ.: Հողվածը հրատարակվել է նույն թերթի համարում հայերեն և ռուսերեն:
9. Սերի պայմանագիրը, վերլուծական փորձ, <Հայաստանի զրուցակից>, համազգային թերթ, Երևան, 19 հունիս 2009 թ., հողվածը հրատարակվել է նույն թերթի համարում հայերեն և ռուսերեն:
10. Թուրքերի հետ լավ բան չեմ սպասում, <Հայք>, 29 սեպտեմբերի, 2009 թ.:
11. 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, <Հետազոտություններ հայերի ցեղասպանության թեմայով>, Բուդապեշտ, 2009 թ., հայերեն, ռուսերեն, գերմաներեն, հունգարերեն, էջ 77-101:

2010 թվական

1. Հայերի ցեղասպանությունը՝ ինչպես որ կա, <Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ>, No. 1, սպրիլ, 2010, էջ 78-81:
2. Հայկական հարցը միջազգային հարաբերություններում, գիտական հոդվածների ժողովածու, Երևանի <Մանց> համալսարան, 2010, էջ 448-459:
3. Նոր սվանդ ցեղասպանագիտության և հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ասպարեզում (Ն. Հովհաննիսյանի <Հայոց ցեղասպանությունը> 10 լեզվով հրատարակած աշխատության մասին), <Հայաստանի Հանրապետություն>, 2010, փետրվարի 18:
4. Սրմին Վեգները որպես մեծ մարդասեր և հայոց ցեղասպանության ականատես, <Լրաբեր հասարակական գիտությունների>, No. 1-2, 2010, էջ 437-447:
5. Ալանավոր գիտնականը և մեծ հայրենասերը (Ալադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ծննդյան մեկ դարը) <Լրաբեր հասարակական գիտությունների>, No. 3, 2010, էջ 392-402:
6. Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը միջազգային հարաբերություններում, <Գիտության աշխարհում>, No. 2, 2010, էջ 14-19:
7. Ալադեմիկոս Գևորգ Ղարիբջանյան, (կյանքն ու գործունեությունը) <Հայկական բանակ> No. 3, 2010, էջ 123-127:
8. Մեծ գիտնականն ու պատմաբանը (Ալադեմիկոս Մ.Գ. Ներսիսյանի ծննդյան 100 տարին), <Գիտության աշխարհում>, No. 4, 2010 թ. էջ 21-27: